ՈՐՈՇՈՒՄ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 24 հոկտեմբերի 2006թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի I-ին դատական կազմը

Նախագահությամբ՝ Հ. Դանիելյանի

Անդամակցությամբ՝ Վ. Հովհաննիսյանի

Ռ. Պապայանի

Քննության առնելով ՀՀ քաղաքացիներ Հարություն Խառատյանի, Արմեն Աբրահամյանի եւ Անդրանիկ Ղուկասյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

Քաղ-եր Հ. Խառատյանը, Ա. Աբրահամյանը եւ Ա. Ղուկասյանը դիմել են Սահմանադրական դատարան, վիճարկելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 73 հոդվածի եւ 75 հոդվածի 3 մասի սահմանադրականությունը:

Ներկայացված դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6 կետի, Սահմանադրական դատարանի մասին օրենքի 27, 28 հոդվածների եւ 69 հոդվածի 1, 2, 4, 5 կետերի, ինչպես նաեւ ՀՀ Սահմանադրական դատարանի Կանոնակարգի պահանջներին: Պահպանվել է Սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով նախատեսված ժամկետը եւ մուծվել է պետական տուրքը:

Դիմողները սպառել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ գտնում են, որ իրենց նկատմամբ կիրառված օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին օրենքի 69 հոդվածի 6 կետով, Սահմանադրական դատարանի I-ին կազմը

ՈՐՈՇԵՑ

Հ. Խառատյանի, Ա. Աբրահամյանի եւ Ա. Ղուկասյանի դիմումը՝ ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 73 հոդվածի եւ 75 հոդվածի 3 մասի սահմանադրականությունը վիճարկելու մասին, ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող ճանաչել ՀՀ Ազգային Ժողովին:

Նախագահող՝ Հ. Դանիելյան

Անդամներ՝